ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 646

04 նոյեմբեր 2019թ.

ԱՐՏԱՇԵՍ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԳՈՒՅՔ ԵՎ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արտաշես Վարազդատի Դավթյանին օտարել Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Խաչատուր Կեչառեցու փողոց թիվ 13/2 հասցեում գտնվող,(վկայական համար 01112019-07-0015, կադաստրային ծածկագիր 07-005-0026-0534) Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման համար նախատեսված 0,00425 հա մակերեսով հողամասը՝ 192 270 (հարյուր ինսուներկու հազար երկու հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամով և իր կողմից կառուցված 31,58 քմ արտաքին (29,43 ք.մ. ներքին) մակերեսով ավտոտնակը՝ 82 108 (ութսուներկու հազար հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամով:

2. Արտաշես Վարազդատի Դավթյանի հետ կնքել գույքի և հողամասի օտարման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 647

04 նոյեմբեր 2019թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր էդուարդ Ստեփանի Ջանազյանին /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր,Օրբելի Եղբայրների փողոց, թիվ 16 / տրամադրել՝

1) 2019 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 22 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 648

04 նոյեմբեր 2019թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Կարապետ Ասատրյանին/գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 10 / տրամադրել՝

1) 2019 թվականի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 170 քմ տարածքում,

2) 2019 թվականի ընթացքում ոգելից խմիչքի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 170 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 649

05 նոյեմբեր 2019թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշումը և համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 10-ի թիվ 04 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Ստեփան Փայլակի Միլիտոնյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Քաղաք Ծաղկաձոր, Չարենցի փողոց, տուն 7/1, հասցեի բնակիչ Ստեփան Միլիտոնյանին տրամադրել դրամական օգնություն 80 000 (ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ երեխայի՝ Հելենա Ստեանի Ղուկասյանի <<Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ>>-ի ուսման վարձը վճարելու նպատակով :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 650

06 նոյեմբեր 2019թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշումը և համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 10-ի թիվ 04 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Ռուդիկ Սարգսի Բագրատյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Քաղաք Ծաղկաձոր,Իսահակյան փողոց, տուն 16 հասցեի բնակիչ Ռուդիկ Բագրատյանին տրամադրել դրամական օգնություն 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ <<Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի>>-ի <<Հաշվապահական հաշվառում և աուդիտ>> ֆակուլտետի <<Աուդիտ>> բաժնի առկա մագիստրատուրայի ուսման վարձը վճարելու նպատակով :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 651

07 նոյեմբեր 2019թ.

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման 7-րդ կետը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1 .Հաստատել ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի՝

1) գործողությունների պլանը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) բնակչության պաշտպանության միջոցների կառավարման սխեման՝ համաձայն հավելված N2-ի,

3) բժշկական ապահովման ուժերի հաշվարկը՝ համաձայն հավելված N 3-ի,

4) հասցված վնասների, փրկարարական և վթարավերականգնողական ուժերի ու միջոցների հաշվարկը՝ համաձայն հավելված N 4-ի,

5) տարհանված բնակչության վրանային ավանի համար առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը՝ համաձայն հավելված N 5-ի,

6) համայնքի տարհանված բնակչության և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի սննդամթերքով ապահովման հաշվարկը՝ համաձայն հավելված N 6-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ